

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	26.	<p>«Անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականությունը, դրա իրագործման ռազմավարությունն ու միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:</p>	
	27.	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:</p>	

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը	Կարծիք
1	2	3	4	5
<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	18.	<p>Ստեփանավանի օդանավակայանի վերագործարկում</p>	<p>- Իրականացվել են «Ստեփանավան» օդանավակայան» ՓԲԸ-ի տարածքի ցանկապատման ու բարեկարգման աշխատանքներ:</p> <p>- ՀՀ կառավարության 06.03.2014թ. «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և «Ստեփանավան» օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքերում ու տարածքներում կառուցապատման և կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման մասին» N244-Ա որոշման համաձայն՝ իրականացվել են համապատասխան աշխատանքներ:</p>	
	19.	<p>Բնակչության ազդարարման համակարգի արդիականացում</p>	<p>- Իրականացվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ-փրկարարական ջոկատների և մարզային փրկարարական վարչությունների շենքերում օպտիկամանրաթելային մալուխների անցկացման աշխատանքներ:</p> <p>- ՀՀ կառավարության կողմից հաստատվել է բնակչության ազդարարման համակարգի արդիականացման և նորագույն կապի համակարգերի ու տեխնիկական միջոցների ներդրման ծրագիրը (գաղտնի): Աշխատանքներ են տարվել ծրագրից բխող միջոցառումների մշակմանն ուղղությամբ:</p>	